

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

2

ՏԵՕՐԷՆ
ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՈԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Յունուար 22

Թիւ 79

هنا أكيداق غزه تهسى

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Դաւառաց համար	60 ,
Արտասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն
Թաւայնակին մէջ (Նորավայ)
Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ
Ծաղկանց բէնը, Գերմ. բանաստեղծութիւն
Քիչ յը գիտական
Երկրագործութիւն
Քաղաքական Տեսութիւն

Թէոդիկ
Ա. Լ.
Ռ. Յ. Պ.
Ժ. Շ.

40 փարայ 40



ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Էսկի Ջապսիէ հասսէսի Թիւ 61

1900

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՍԲԱԳՐԱՊԵՏ

ԵՐՈՒԱՆԻ ՏԵՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

2

ՏԵՕՐԷՆ

ԲԻԻՋԱՆԻ Մ. ՊՈՋԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Յունուար 22

Թիւ 79

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ



Պատրիարքարանի անմիջական հսկողութեան ներքեւ ըլլալով, Կ. Պոլսոյ Թաղապարտարանը հարկաւ օր մը պիտի մտնեն փափաքելի կացութեան մէջ՝ այս փափաք յայտնուած է երկար ժամանակէ ի վեր, քանի որ մասնաւորապէս հաստատուած մարմին մ'ալ կայ, Ուսումն. Խորհուրդը, որուն համար կ'ըսուի թէ կը հսկէ, կը խորհի, նիստեր կը գումարէ՝ օրէ օր աւելի մղում տալու ազգային դաստիարակութեան: Գաւառները ինչպէս են: Գործը, կըթական գործը գաւառներուն մէջ ինչպէս կ'երթայ. զմեզ հետաքրքրող ամէնէն շահեկան խնդիրն այս է միշտ: Մեծ վիճաբանութեանց նիւթ եղած է երբեմն կեդրոնացման եւ ապակեդրոնացման գրութիւնը: Վիճաբանութեան վրայ բաւական ժամանակ անցած է: Վերջիշում մ'ընելու համար կը փութանք համառօտիւ պարզել անոր գլխաւոր կէտերը:

Կեդրոնացման կուսակիցը կը պնդեն. Պէտք է որ գաւառային վարժարանք ա-

մէն կերպով Կ. Պոլսոյ Կըթական Ծրագրին ուղղութեան հետեւին, պէտք է որ գաւառային Հոգաբարձութիւնը շարժին Կ. Պոլսոյ Ուսումն. Խորհրդոյ կամ, որ նոյն է, Մեծ Հոգաբարձութեան հրահանգներուն համեմատ, պէտք է որ ուսմանց տեսակը, աւանդումը, շրջանը չափուին Կ. Պոլսոյ եղանակներուն եւ տարազին համեմատ. պէտք է որ գաւառացի ուսանողը այսինչ դասակարգը, այսինչ ուսումը, հասցնեն սա՛ որոշ կէտին Կ. Պոլսոյ ուսանողներուն պէս կամ անոնց չափ: Զորօրինակ, թուաբանութեանց այսչափ բան սովորելու է մէկ տարուան մէջ գաւառացի ուսանողը, ինչ չափ բան որ սովորած է կամ պիտի սովորէ մէկ տարուան մէջ գաւառացի ուսանողը, ընդհ. ազգաց պատմութեանցն սաչափը ընցնելու է մինչեւ տարւոյն վերջ, գրաբառ Հայերէնէն սաչափ բան սովորելու է, Թրանսերէնէն ալ սաչափ: Գաւառային դաստիարակութեան կամ ուսմանց ստուգանիչը պէտք է նրկատուի Կ. Պոլսոյ դաստիարակութեան չափը: Այս է կեդրոնացականներուն կարծիքը զոր ի հարկին կրնան ընդլայնել երկրորդական ծանօթութիւններով:


Ապակեգրոնականք ինչ կ'ըսեն. — Թողունք միջավայրի տարբերութեանց մեծ խնդիրը, կ'ըսեն, թողունք որ նոյն իսկ մանկավարժութեան սկզբունքներուն համեմատ դժուարին է՝ եթէ ոչ անկարելի՝ միաբերուն զարգացումն համեմատական ընել ամէն կլիմայի, ամէն միջօրէակներէ։ Այսօր ոչ ոք կրնայ ուրանալ թէ, կ'ըսեն, մարդկային մաքին կադմութեան մեծագէտ կը նպաստեն կ'ազդեն օդը, ջուրը, լեռնագրական, ջրագրական հանգամանքները։

Թողունք առ այժմ այս պարագան, կ'ըսեն, եւ խնդիրը ձեր տեսակէտէն քննելով, հարցնենք թէ (կ'ըսեն կեդրոնացականներուն) ինչ բանաւոր հիմանց վրայ կը հաստատէք ձեր դրութիւնը, ինչ պատճառաբանութիւններ ունիք, որ իրողութիւններէն վաւերացուած ըլլան, եւ ցոյց տան թէ իրօք գաւառային ուսանողք Պոլսական կամ կեդրոնական ուսանողներուն միջին չափով կը զարգանան, կը դաստիարակուին։ Կ'ուսանին։ Ունի՞ք վիճակագրական կարեւոր ծանօթութիւններ, տեղեկագրական ձեւով պատրաստուած ցուցակներ՝ որոնցմէ ձեր պաշտպանած դրութեան օրինաւորութիւնն երեւի պայծառօրէն։ Վերջին քսան եւ աւելի տարիներէն ի վեր կանոնաւոր Ուսումն. Խորհուրդներ ունեցած ենք, որք իրենց պաշտօնին ազդեցութեան ներքեւ ի հարկէ կեդրոնացական դրութեան պաշտպան հանդիսացած են եւ ըստ այնմ գործած են կամ գործել կարծած են։ Արդ, այս բաւական երկար շրջանին փորձառութեան արդիւնքն ո՞ր է, որմէ այսօր մեք ապակեգրոնացականքս՝ լուսաւորուինք, եւ չպնդենք այլեւս մեր սեփական դրութեան վրայ հիմնուելով գիտական, մանկավարժական, բնախօսական սկզբունքներու վրայ։ Քսան տարիներու շրջանին մէջ Ուսումն. Խորհուրդ մը հրատարակած է այսպիսի աշխատութիւն մը, համեմատական տախտակներ կ'Պոլսոյ եւ գաւառաց ուսանողներուն զարգացման աստիճանացոյց տուող։ Ո՛չ, հետեւաբար ապակեգրոնացման եւ կեդրոնացման երկու մեծ խնդիրները կը մնան դեռ յերկրայ, վիճաբանութիւնը փակուած չէ, քանի որ կրթական խնդիրներով զբաղող պաշտօնական մարմինը, Ուսումն. Խորհուրդը, կամ Պատրիարքարանը, տակուին նիւթական փաստերով ապակեգրոնացականներուն առարկութիւնները կարծկապած չէ եւ խնդիրը վերջացուցած չէ ի նպաստ իր դասին։

Մեք մեր մասնաւոր կարծիքն յայտնելէ առաջ այս սկզբունքի խնդիրներուն վրայ, հոս մատնանիշ կ'ընենք այսօր մեր գաւառային դաստիարակութեան կամ ուսումնական վիճակին արդահատելի կացութիւնը, ըստ վկայութեան գաւառային բոլոր թղթակցութեանց՝ որք կանոնաւորապէս կը հրատարակուին ազգային օրաթերթերուն մէջ։ Իրաւ է որ անցեալները մեք կ'ըսէինք թէ նիւթական հացը շատ պարագաներու մէջ երկրորդական, երրորդական կ'ընէ բարոյական հացի, ուսման կամ կրթութեան խնդիրը։ Սակայն մեծ անհողութիւն մը այս մասին ապագային համար կ'ունենայ ցաւալի հետեւաքներ։ Կրթական խնդիրը միշտ համեմատական կ'ըլլայ ժողովրդեան մը նիւթական կացութեան. ասոր տարակոյս չկայ, այսինքն, երբ ժողովրդեան մը նիւթականը վնասուի, ազդուի տնտեսական պայմաններէն կամ պարագաներէն, ի հարկէ կրթական վիճակն ալ կ'իյնայ իր նախկին մակարդակէն, իր դրաւած տեղէն վար կ'իյնայ, բայց պէտք չէ թողունք որ առժամանակեայ անկանոնութիւն մը բոլորովին անհոգ ընէ զմեզ կրթութեան պէս ոչ նուազ կենսական խնդրոյն համար։

Մեք հոս կրթական տաղանային վրայ կը խօսինք որ ճարակած է դաւառին մէջ:

Այս առթիւ յառաջիկային պիտի խօսինք դարձեալ կեդրոնացական եւ ապակեդրոնացական կրկին դրոյթեանց վրայ:



ԹԱՇԿԻՆԱԿԻՆ ՄԷՋ

(Նորալիկ)

Ա.

— Մեղք, բէ՛ք ճահիլ օրբեւարի միաց կէնճը:

— Մէյ մըն ալ իրե՛ն հարցուր, թա՛մ բունաը կտաւ ճէվիդը կտտերու:

— Հասկցածդ չէ վաթկածը:

Այս ասուլիսերուն մէջ սա ստոյգ էր որ Բերուզ իր ձկնորս էրիկը հողը դրած վայրկեանէն՝ աւելի շատ բաւրասող ունեցաւ անունին չուրջը քան թէ արդահատող: Դուռ դրացի չէին քաշուեր մէյմէկ սուտ ճռթելու: Տաւապարտուց կրած բոլոր այս գրոյցներուն առիթ տուողը իր քսանըմէկ գարուններուն վառ փթթումն էր և այն վրդովիչ գեղեցկութիւնը որ սեռելիկ չամիչ աչուրներէն ու մարմինին անթերի շրջագլծէն կ'արտացոլար:

Այն քանի մը աղգականները որ յուզարկաւորութեան փութացեր էին դալ, թաղումէն դարձին մէյմէկ ցաւակից բառ թոթոված՝ կորսուեր գացեր էին, մէյ մ'ալ չի մտնելու հաստատ որոշումով անոր մահոտ սեմէն ներս, վախնալով որ վրանին բեռ մը կը դառնայ ան իր Սեփոնիկովը:

Սեփոնիկը, որ չա՛փ շատ կը դուրգուրար վրան, իր առադաստի գիշերին այդ միակ աստղը քնքշիկ որ փալփիլ սկսեր էր տարի մը յետոյ՝ լըրճուկ կեանքը կարծես թէ սրբագրել ուղեւով յոյսի անուշ պաղպաղով մը:

Ի՛նչքան հանդիստ էր, պատիւն ալ չի խախտած, էրկանը ողջութեանը, է՛հ, երջանիկ նորէն, հակառակ այն դժոխք կեանակցութեանը որուն դատապարտուած էր

առտուները ամուսին երթէն առաջ հայհոյանքի տարափով մը լուացուելով՝ բոթուռը խոզանակելու մոռցած ըլլալուն, կամ քանի մը մէթրոնոց գօտին դետինէն գրտնուելուն, և հակառակ այն նահատակ կեանքին զոր կը քաշքշէր անտրտունջ՝ գիշերները մինչեւ ժամը երեք սեղանին քով զաւկին հետ սպասելով խման էրկանը:

Ապրանքը ապրանք չէր, ի՛նք ալ կ'ըզգար ատիկա. բայց պէ՛տք էր որ այր մարդու դերը ստանձնէր հիմայ, գրկանքի բոլոր փուշերովը մէկտեղ, դիեցնելու համար իր թռչնիկը մատղշուկ:

Լուացարարութիւնը աղէկ կուգար իր կորովի բաղուկներուն: Ու Բերուզ շաբաթուան չորս հինգ օրը Բերայի ունեւոր տուաները, ծխնելոյզներուն առջին էր՝ ամբողջ օրը կայնուկ տատելով ճերմակեղէններու անգութ դէզին վրայ: Ձեռուրները լղի՛լ լղի՛կ տղտղկած՝ տուն կը դառնար, երբ կապերը վառուած կ'ըլլային ալ, իր շան տանջանք յողնութեան փսփոյ մը վաստակը տաք տաքին յատկացնելու երկու հոգինոց իրենց չքստի ասլուստ-կապուստին:

Կսկծաղին էր հանդիպիլ այս դեռատի կնկան որ՝ լուսը ճեղքուելու վրայ՝ սե չալդիսուն ու ճերմակ կապոց մը անութիւն տակ, Տօլապտէրէի դռնէնքէն մինչեւ Բանկալթի կամ Թագսիմ կը չափչըփէր, հարուստին աղաւտները մաքրելու իր միօրինատէս տափակ զբաղանքին կապուած:

Իրիկուան, երբ Սեփոնիկը դրիկց տունէն կ'երթար առնել, ամոքած կ'ըզգար թեւերուն ուժէ ինկածութիւնը, ու անոր տղու մէկ ժպտոյր կամ մամայի համեղ թոթովումը բաւ էր անսահման հրճուանքով մը համակելու իր սիրտը սգաւոր:

Ամիսը մէյմը հազիւ կրնար ծայրը ծայրին բերել միսէ կերակուր մը մէջտեղ հանելու համար, և օր աւուր սեղանին պառնիկ հացի կամ շատ շատ ճէթով եփուած ընդեղէնի մը սղորմուկ փարթաւութիւնը կ'ըզենուր: Բերուզ դո՛հ էր սակայն, և տըրտունջի բառ մը չէր ուռեցներ իր շրթուները:

Բ.

— Կը վայլէ՞ ծեղի, էֆէնտի, ... ինձի... պէս... ախիատ... կնիկ... մը...

Ամօթին դէմքը շառագոյն և առանց դէմինին երեսը նայելու, հագիւ կրցած էր թուքը կլլելէն կմկմալայսչափը տունին մեծին՝ որ չէ՛ր քաշուած բակէն անցնելուն կամիթ մը փակցնելու անոր հոլանի մուտս թեւին, պօսպօսող լիտի խօսքի մը հետ:

Իրեն հանդէպ այս պագչոտ ընթացքը կրկնուած էր նաև ուրիշի մը տուն, այս անգամ աւելի՛ լիւր ձևի մը տակ, երբ Բերուզ փրփրոտ տաշտին վրայ ծռած էր, աշխատանքին բերամբը բէշերը սոթթած, ցուցադրելով ամբողջ վրդովը իրեն առոյգ բուսերուն: Եւ, անէ՛ծք... Իրիկուան տեսած էր որ առնելիք վարձքին քանի մը պատիւը կը վճարէին: Իր պարկեշտ կնոջ անձնասիրութիւնը ճանկատուած այսպէս, կարդացած էր խեղճ կինը այն յօսնացող թագուն նստատակը որ կը ծպտէր այս կաշառքին, ի՞նչ կ'ըսեմ, այս կապէնքին մէջ. ու թողով որ բակին մարմարներուն վրա՝ գլտորի քանի մը արծաթը պփղանքի չէշտ աղմուկով մը, առած քսլած էր առանց մնաս բարովի...:

—Անուշիկ ասլածամարըս, ինծի ե՞րբ ազատես պիտի ատոնց ծառքէն...

Դիշերը վերմակը գլխուն քաշելէ առաջ հայրմերին հետ բողոքի այս միմունջը կը մրմուր հիմայ, աչքերը միշտ խոնաւ՝ այդ անհարկի վարմունքներուն վերյուշումովը: Ու դերագոյն հեշտութեան մը պէս, մո՛ւթը միայն կը խմէր անոր արցունքները, մարդո՛ւ իմաց չի տալով:

Խելքը կերպով մը չէր պառկեր թէ ի՞նչպէս ատ հարուստ կանամբի մարդիկը զիջանէին իր քղանցքին շուրջը դեղերիլ, քանի որ վերը, սալօններու մեղի հանգստաւտութեանը մէջ «հանճար»ներ ունէին անոնք, պուպրիկի՛ պէս ծիծղուն ու պատկերի՛ պէս աղուոր:

Կ'զգար թէ յանցանք մըն է եղեր կանախէն այրի մնալը և թէ երեսին տեսքութիւնն ու մարմինին թարմութիւնը մեղքե՛ր, պատուհասներ՝ ևն եղեր իր գլխուն:

Բնական էր որ ասանկով ծուխերուն թիւը սակաւնար, նաև ապրուստի աղբիւրն ալ քիչ վաղէր: Հիմայ թշուառութիւնը աւելի՛ մօտէն ցուցնել սկսաւ իր խրտուղակը, և կառչեցուց անոնց այն անըմբեր լիա-

մը որուն մէջ կը տեսնէ մարդ թէ ինտո՞ր բան է գիշերները յաճախ առանց լամբարի անցունելը, ցամաք հաց կրծել ու պառկիլը, հարսնութեան չփակը զաւկին բալթօ՝ եւ պատուհանին վարագոյրը իրեն փոխնորդ ընելը:

Գ

—Ծօ՛, հո՛ս էկուր, ամօթ չէ՞ քեզի քի մուրաս:

—Էս չեմ մուրար կոր,

—Օ պիւրի՛:

—Շամալը կ'առնէ՞ք:

Սրոնէքի մէջ ձմեռ դիշեր մը այս խօսակցութիւնը կը դառնար սեղանի մը շուրջ ուր քանի մը մարդիկ բողբուած էին ճնկելու, տուն երթալէ առաջ:

Պղտիկ խլրոտ տղեկ մըն էր իրենց մօտիկցողը, արգահատելի՝ խոշոր հինցած ոտքի ամաններէն բռնէ մինչև կնկան շալով մը պլլուած գլխիկը որուն ծայրերը թեւերուն տակէն առնուած՝ մէջքի գօտիի ալ կը ծառայէին: Դուրսի ցուրտը կաս կալուտ ըրած էր քիթը բերանը: Կը գոփար: Ծանչցան զինքը, Բերուզին տղան էր: Այսքանը հերիք էր, որպէս զի անոնք իրենց տասնոցը ցնծային խկոյն, առանց լուցկիի տուփ մը վար դնելու, նշանակիչ ձեւով մը իրարու նայելով ու դէմքերնին քմծիծաղ:

Ու տղան մէկ սեղանէն միւսը կ'անցնէր ամեղակի մը պէս, ճիտը ծուռ և սիրտ խածնող աղերս մը իր պճտուն աչքերուն խորը, շատերէն զեխ, ուրիշներէ գլխու թեթիւ թոթուրութեամբ մը ստանալով սոսի, որ «մանրութ չի կայ» կը թարգմանուի:

Շարաթ մը կար որ այս բանին սկսեր էր մօրը դրդումով, գիշերները կապելայէ կապելայ սլքտալով իր մոմ-լուցկիի առաջուկ պաշարը ձեռքին մէջ: Սեփոն արցունքը աչքին՝ դանգատել էր մօրը տուն դառնալուն:

—Չէ՛, խայրի չեմ էրթար... Ինծի կը մուրաս կոր ըսին...

Ու տեսնելու էր այն լացը զոր հակեկանքով սկսած էր այս խոստովանութիւնը ըրած ատեն, տղու անդուստ լաց մը որ

կուրծքը կը թոթուէր ու թեզանիքովը կը սրբուէր:

Ի՞նչ ընէր, ի՞նչ կրնար ընել խեղճ կիներ:

Յանկարծ, միտքը արտասովոր բան մը իյնալու մը պէս, ցատկեց նստած տեղէն ու գնաց վար առնել հայելիի այն եռանկիւն կտորը որուն վրայ նայած չունէր զըրեթէ՝ «օղորմած հոգի»ին մեռնելէն ի վեր:

Ճանճի ծիրտերով կէտկիտուն, ապիկին տեղ տեղ թափած անշնորհ հայլի մըն էր ասիկայ որուն մէջ սակայն Բերուզ նշմարեց այն հրդեհը որ կար իր աչքերուն մէջ, Ու դիւային սաստկութեամբ մը քթթեց դանոնք: Տակաւին երիտասարդ էր... Տակաւին ըսնաւիկ... Կրնա՛ր...:

Պահ մը մնաց այսպէս վարանոտ: Քունքերուն վրայէն փայլակներ կ'անցնէին:

— Զը՛գ... դռնեց յանկարծ իր մարգրիտ աղանձերուն տակէն, և պատուհանը բանալով վա՛ր նետեց՝ մայթերուն վրայ ցրելի ցրելի ընելու ապակիի այդ փորձիչ բեկորը որ մազ մնացեր էր ճամբան փոխել տալու իրեն:

Հոգին փրկած էր: Կուրծք պիտի կրնա՞ր տալ սակայն չքաւորութեան այն անողո՛ք պարապմունքին որուն մէջ կը հեծէր հիմայ չարաչար:

Դ

Երեք օրէ ի վեր անընդհատ կ'իյնային ձիւնի հատիկները, տանիք, փողոց, պատուհան աղւոր մը ճերմկեցնելով սպիտակ դամէլիայի իրենց պաղուկ փերթիկներով:

Գիշերը վրայ հասեր էր, միամիտ, անդորր դիշեր մը որուն սեւ լուացուած էր գետնի շուշանութենէն ու այն սառ ցուցլանքէն զոր լուսինը վար կը խրկէր հիմա:

Սեւերով կին մը կ'արտորար Տօլաստէրէի խրճիթէ մը սարգած, և ամէն քայլափոխի սրունքները ձիւնին մէջը թաղուելէն կ'երկննար դէպի Բերայի սլողոտան:

Բերուզ կը մուրա՛ր: Զի ճանչցուելու համար զրգլիքներու մէջ փաթթած վիզ ու մազ, ուրուականի պէս կը խուսափէր սեմէ սեմ:

Դուրսը այն անսահման ոգեորութիւնը կը խլրտէր զօր ձմեռ դիշերը կը շինէ Բե-

րայի մէջ ձիւնին չքեղ խաւերովը: Զոյգեր կ'անցնէին իր քովէն, գրպանին տաք, սիրտերնին տաք, կեանքոտ, տարփոտ զոյգեր, ոմանք հովոտ երգ մը, ուրիշներ բռնուռ մը բերաննին:

Բերուզ թաշկինակի պզտիկ ծրար մ'ունէր հիմայ որուն հետ հապճեպով տուն կը փութար, տխուր հակասութեան մը պէս սողողելով մարդերու այս խանդոտ եռուգետին մէջէն, առանց նոյն իսկ ականարի մը նետելու շուրջի շողշողումին՝ ուր ամէն անցորդ նազանքով մը կը նայուէր կը չափուէր շիտակ ճամբուն կենդանութենէ քրտնած ցուցափեղկերուն մէջ:

Տուն հասնելուն քնացած գտաւ Սեփոնիկը: Խեղճը փշրանք մը չի դրած իր կտուցին՝ անօթութիւնը գլխու բարձին ծախեր էր այսպէս:

Տրապէզին վրայ, չրթունքը բեկ գաւաթի մը մէջ ձէթի կանթեղը կը պլպլար դեռ: Ու մայրը անոր հոգեվարք լոյսովը եկաւ դիտել մրափն իր ձագուկին, սիրտը խըշխանքով առլի: Քունը առեր տարեր էր անոր դէմքէն նքթումի ամէն նշան. ատեն ատեն կը լսուէր սակայն, ապակիներու տենդոտ դղրդումին հետ, սլզտիկ սուր գալարումներ՝ անոր միմիկի պորտէն առթուող:

Յետոյ դացեր էր թաշկինակը քակելու կրակարանին քով, մինչ անդին կանթեղը կը շիջանէր հատած ձէթին մէջ պատրոյգի վերջին լզվառուքով մը՝ մութը ձգելով ամբողջ սենեակը: Քանի մը կտոր ածուխ էր հետը բերածը, մո՛ւրը իր մոյրին՝ զոր տալաւին գաղջ մոխրներուն մէջ թափած էր դողդղալէն, քիչ մը սպասած էր որ հրաճիքն, յետոյ եկած էր կիզիլ վերմակին տակ, ձագուկը լանջքին վրայ սեղմելով:

... Առտուն չէին արթնցած անոնք: Սմբողջ գիշերը քնացեր էին բուքին խեղկատակ երգերովը և այն զուարթ ազմուկով որ դէմի հալանքի տունէն կուգար երգիւնակի մը քաշքշուած ձայնալեակներուն հետ:

Հում ածուխը փափաքուած դերը խաղցեր էր: Բերուզ ուզեր էր որ կեանքէն շրջաւորն Սեփոնիկն ու ինք, թշուառու-

թիւնը իր ապիրատ փորագրութիւնը իրենց մարմինին վրայ ընելէ առաջ: Ածուխին կազը ջնշած էր այսպէս Սեփոնին ստամոքսին գոգաւը եւ մօրը միտին աղւորութեան աղէտքները:

Սեւով սեւ մը կը մաքրուէր:

Միայն թէ դրացիներուն սեւ երջանկութիւնը չէր յագեցած, որովհետեւ Բերուզ իր յետին տնանկութեանը մէջ իսկ երկաթ մնացած էր պատիւին համար:

ԹԵՈԴԻԿ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԴԱԻԹ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅ

Պարթլէմի Սէնդ-Իլէր կ'ըսէ թէ՛ (David l'Arménien) Դաւիթ Հայազունը եւրոպական կամ տիեզերական համբաւ ունեցող հին ու նոր իմաստասէրներուն պատմական շարքին մէջ գրէթէ անծանօթ մնացած էր մինչեւ այն ատեն երբ գերման Պ. Նիւման սոյն Հայ փիլիսոփային վրայ, փիլիսոփայութեան ընդհ. պատմութեան տեսակէտով, յոյժ շահեկան ու վաւերական պատմագրոյթ մը հրատարակեց Journal Asiatiqueի (Ասիական Հրագիր) 1829 Յնվր. և Փետր. ամսաթիւերուն մէջ: Արիստոտէլի փիլիսոփայութեան մեկնիչներու անուանց ցանկին մէջ, Հայ փիլիսոփայ Դաւիթ անունը ցամաք կերպով միայն յիշատակուած էր, առանց մեզ հասկցնելու թէ՛ ո՞ր դարուն մէջ ապրած, և ո՞ր տեղացի էր: Գերմանացի Ալպէռ Յապրիգոս ևս, որ 17րդ դարուն (1667—1736) մէջ իր լայնածաւալ հմտութեամբ հանրածանօթ մատենագիր մ'է, Լատինական Մատենադարան և Յունական Մատենադարան անուն իր երկու երկասիրութեանց մէջ, թէեւ ստեպ յիշատակած է Հայ փիլիսոփային անունը, սակայն շատ անորոշ կերպով մը ծանօթացուցած է: Նոյնպէս Պիւհլ, որ (1763—1821) Պրունսվիքի մէջ ծնած Գերմանացի գիտուն փիլիսոփայ մ'է, Արիստոտէլի իմաստասիրական գործերը բովանդակող իր հրատարա-

կութեանց Ա. Հատորին մէջ գոհացուցիչ տեղեկութիւն մը չի հաղորդեր Հայ փիլիսոփային նկատմամբ. սակայն Դաւիթ Անյաղթի ձեռագրերը գոյութիւն ունին և ողջ են: Հայ իմաստասէրին գրական գործոց բաղմաթիւ ձեռագրերը խնամով պահուած կը մնան Ֆլորանսի, Հռոմայ և Բարիզի թանգարաններուն մէջ, սակայն դժբախտաբար ցարդ ոչ մէկ բանասէր մտքէն անցուցած է ո՛չ միայն զանոնք հրատարակել, այլ և վերլուծել, անոնց իմաստասիրական արժանիքն ի վեր հանել և գնահատել: Վիդէնպալս կը յիշատակէ զԴաւիթ իրրեւ մեկնիչ Արիստոտէլի իմաստասիրական catégoriessերուն*, Պլատոնի Ֆէտոնին կամ Փէտոնին վրայ գրած իր փիլիսոփայական գործին մէջ, առանց ճանչնալու թէ հեղինակն ո՞վ է: Վիդէնպալս սաչափ միայն կը յիշատակէ թէ Արիստոտէլի Գաթեկօրիններուն և Պորփիրի Ներածութեան վրայ գրուած մեկնութեանց հեղինակն էր այն փիլիսոփան, որ Հայոց մէջ ազգային առաջնակարգ մտածողներէն մին կը համարուէր: Հելլադայի իմաստասիրական վարժարաններուն մէջ ու-

[*] ԵԱՆՕԹ.—Catégorie բառն, որ ֆրանսացած է եւ զոր մեր ու այլ ազգաց մէջ էրէ, բառէրէ Թարգմանել սովորութիւն եղած է, յունարէն է, եւ նախնական իմաստով կը նշանակէր բառաբանութիւն. վերջէն Արիստոտէլի իմաստասիրութեան մէջ, նոյն ատենի ո՛ր գիտէ ի՞նչ ըմբռնումներէ Թելադրուած, նոյն ատենէն սկսեալ ու յետոյ զործածուեցաւ իմաստասիրական մէթոտի մը համաձայն վերին ու վերջին զաղափարաց տրոհիչ բառն ու բառերն նշանակելու: Ֆէտոնը կամ Փէտոնն ալ Սոկրատայ մէկ մտերմին ու աշակերտին անունն է: Պլատոն այդ անուամբ հոգւոյ անմահութեան վրայ գրուած տրամախօսութիւն[dialogue] մ'ունի, որ իր գեղեցիկ եւ վսեմ գրուածներէն մին է, եւ որ վենետիկեան Ս. Հարց կողմէ գրաբար լեզուով Թարգմանուած է: Սա տեսակ մը ողբերգութիւն է, զաղափարաց ընտիր դասաւորմամբ եւ ամենուրեքեան վսեմութիւնն ի վեր հանող պերճախօսութեամբ մը վերջացած, եւ ուր Սոկրատէ մոլախինդին զաւաթն, ինչպէս Յիսուս լեզուոյ բաժակն ի ձեռին՝ իր օրհասական ժամուն սրտաշարժ ու սրտապնդիչ լեզուով մը կը խօսի հոգւոյ անմահութեան վրայ, շրջապատեալ իր աշակերտներէն ու բարեկամներէն որք կը մխիթարուին ու կը զօրանան իրենց վարդապետին՝ հոգեվարքի պահուն՝ հոգւոյ անմահութեան վրայ ճառած իմաստասիրական հաւմոգմանց ու սկզբանց վարդապետութեամբ:

սումն առած ըլլալով, Աթէնքի, Աղէքսանդրի և Կ. Պոլսոյ մեծանուն վարժապետաց իրրեւ աշակերտ, նշանաւոր տեղ մը գրաւելու է իր գրական գործոց վրայ ցարդ լռող փիլիսոփայական պատմութեան մէջ:

Փրանսացի մեծանուն իմաստասէրն ու գիտունը կ'ըսէ թէ Դաւիթ Անյաղթ Հայ փիլիսոփայն Արիստոտէլի շատ գործերը թարգմանած ու մեկնած էր. մասնաւորապէս Տրամաբանութիւնը թէ՛ Յունարէն թէ՛ Հայերէն երկու լեզուով միանգամայն: Երկու լեզուաց գործածութիւնն հաւասարապէս իրեն ընտանի էր, ինչպէս կը վիայեն ու կ'ապացուցանեն մեր ձեռքը զտնուած յունարէն գրուածները:

Աւասիկ իր փիլիսոփայական երկասիրութեանց հակիրճ ծանօթոյքը.

1. — Միսիայն Հայերէն. — Ասեմանք սկզբանց ամենայն իրաց. — Հիմունք փիլիսոփայութեան: (ՄԱՆՕԹ. — Գիտնալու է Պ, Պարթըլէմի որ Հայ փիլիսոփային սոյն իմաստասիրական գործոց յունարէն բնագրերն ալ երեւան ելած են, որպէս գերմանացի և անգլիացի արևելագէտք իրենց բանասիրական ու մատենադրական վերջին խուզարկութեանց ու հրատարակութեանց մէջ յիշատակած են):

2. — Հայերէն և յունարէն. — Մեկնութիւն Պորփիրի Գերածութեան վրայ. — Մեկնութիւն Արիստոտէլի Գաղեկորիներուն վրայ: (Գաղէկորի բառին նշանակութիւնն արդէն տըրուած է):

3. — Միայն յունարէն. — Ընդարձակ Գերածութիւն վերջին մեկնութեան վրայ:

4. — «Գաղեկորի»ներուն եւ Հերմոնիաի թարգմանութիւնները. — Առաջին եւ Վերջին Վերլուծականներու (analytiques) քաղուածոյք մը. — Աստուծոյ վրայ առ Աղեմանդր ուղղեալ Գամակին թարգմանութիւնը. — Մոլութեանց և Առաքինութեանց վրայ համառօտ գիրք մը, որ արմէն փիլիսոփային ընծայուած անյայտ կամ կասկածելի գործերէն մին է:

Հայ փիլիսոփայն ունի դեռ ուրիշ գործեր, որք թէեւ փիլիսոփայութեան սահմանէն դուրս են, սակայն յիշատակութեան արժանի են, ասոնք աստուածաբանական ընդարձակ ճառեր են, ի մէջ այլոց՝ նշա-

նաւոր է քարոզ մը, բեմասացութիւն մը, զոր արտասանեց Աթէնքի ամպիոնէն*:

Այս քարոզը որ նախ հելլեններէն լեզուով գրուած է Հայոց գրաբար գրականութեան մէջ գլուխ գործոց մ'է. Դաւիթ Անյաղթ Հայերէն Քերականութիւն մ'ալ յօրինած է, որուն հատակոտորներն և եթ կը մնան: Թարգմանած կամ մեկնած է նաեւ Թրակացի Դիոնիսոսին քերականութիւնը՝ ի պէտս իր հայրենակցաց:

Իր զանազան գործոց հանգամանքներէն դատելով, Դաւիթ Անյաղթը կը գտնենք փիլիսոփայ, աստուածաբան և երազական: Փրանսացի իմաստասէրը կը յիշատակէ թէ Դաւիթի կենսագրութեան մասին շատ քիչ ծանօթոյք ունի, թէ Տուրուբերանի Ներքիւն քաղաքէն է, թէ Ներսէսի ըսածին նայելով, Հայոց նշանաւոր պատմագիր Մովսէս Խորենացիին ազգականն է, թէ ուրիշ հայ ժամանակագիր Սամուէլ Պատմիչին վիպութեան համեմատ՝ Անյաղթը դեռ կ'ապրէր ու մեծ համբաւ կը վայելէր 410ին, թէ մեռած է 2. դարուն սկիզբը, թէ Դաւիթ մին էր այն երիտասարդներէն զորս Հայ Դպրութեան վերանորոգիչ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ յունական վարժարանները զրկեցին, նոյն ատենի իմաստասիրութիւնները քաղելու համար:

Պարթըլէմի կը շարունակէ ըսել թէ Դաւիթ իրմէ սպասուած յոյսերը պակեց, իրեն վրայ դրուած վստահութիւնն արգարացուց: Բաւական է կարդալ իրեն գրած յունարէն գործերը համոզուելու համար թէ ո՛րքան զնահատելի արժանեաց ու տաղանդի տէր է: Իր գիտութեամբն ու ոճով, ասացուած.

ՄԱՆՕԹ. — Յունարէն Վէ՛ր բառն հայերէն բէ՛ր բառն է. մեր այն գրագէտք՝ որք երբեմն բէ՛թ, եւ անոր ածանց բէ՛թասացութիւնը գործածելու մէջ յամառ կամ տխմար սովորոյթ մ'ունին, Խող գիտնան Թէ բէ՛ է եւ ոչ Թէ բէ՛թ. յոյն Վէ՛ն ահա հոս է, Խող տեսնեն: Ինչպէս այժմ գիտական կամ բժշկական վարժարանաց ընթացաւարտ ուսանողը մասնաւոր նիւթ մ'ընտրելով Բէ՛ մը [մրցաճառ] կը յօրինէ ու կ'արտասանէ, այսպէս ալ հին Աթէնքի մէջ ուսանող մը իմաստասիրական ուսմանց եօթն տարիները լրացնելէն յետոյ՝ պարտական էր հրապարակախօսութիւն մ'ընել Աթէնքի (Վէ՛ն) բեմին մէջ, այսինքն նոյն ատենի ուսուցչաց եւ ուսումնականաց պաշտօնական սրահին մէջ:

քովն ու գրուածքովը Յոյն է. և այս է ամէնէն աւելի գեղեցիկ ներբողը զոր կրնանք յօրինել ի գովեստ և ի պատիւ Հայ իմաստասէրին:

Հելլադայի մէջ երկարամեայ և բազմաբիւն ուսումնական հմտութիւններ ամբարեւել յետոյ, վերադարձաւ իր բնիկ երկիրը, և կ'երեւի թէ ինքզինքը բոլորովին նուիրեց միմիայն գիտութեանց, զի նոյն ատեն Հայ աշխարհը թատր հանդիսացնող տաղնապալի յուզարկութեանց մէջ իր անունը գէթ մի անգամ չի յիշուիր:

Նիւման կը յայտնէ ու կը վստահացնէ թէ կ'ըսէ Պարթըլէմի, «Անյաղթ Հին իմաստասիրաց իմաստուն առաջնեւը Հաւաքածոյին մէջ գտած է քանի մը առաջներ, որոնք չեն գտնուիր յոյն հեղինակաց մէջ: Նուման՝ որ Հայ իմաստասէրն իր իսկատիպ կամ բուն ձեռագրաց մէջ ուսումնասիրած է, բացորոշ կը յայտարարէ թէ «Դաւիթ Անյաղթ դասուելու է Երդ դարու ամէնէն աւելի հոգակաւոր նոր-Պղատոնեանց կարգին մէջ, և թէ այսուհետեւ փիլիսոփայութեան ոչ մի պատմութիւն չի կրնար լռութեամբ անցնիլ ու չյիշատակել Հայ ազգին եռամեծ և անյաղթ փիլիսոփան»:

Պոփիւրի ներածութեան վրայ յունարէն մեկնութեան մէջ, քայլ առ քայլ կը հետեւի Ամմոնիոսի մեկնութեան, միեւնոյն հարցերուն վրայ կը խօսի, միեւնոյն կարգաւ կ'ընթանայ, միեւնոյն լուծումները տալով, երբեմն ալ նոյնիմաստ բացատրութիւններ փոխ առնելով:

Գաղեկոսիներու վրայ մեկնութիւնը կը բաժնուի շատ որոշ երկու մասերու, Նախաբանականքն (prolegomenes) և նոյնին մեկնութիւնը: Նախաբանականք Ամմոնիոսիններէն և նոյն իսկ Սէմբրիկիոսիններէն շատ աւելի ընդարձակ են: Անյաղթի այս գործը Արիստոտէլի գործոց մասին տեսակ մը ընդհանուր ներածութիւն է, տասն կէտերու բաժնուած: Երկրորդը՝ յորում յոյն փիլիսոփային գործոց դասաւորման վրայ կը ճառէ, կը պարունակէ աշխարհի թանկագին ու հազուադիւտ ծանօթութիւններ, որք կրնան ամբողջացնել մեր ունեցած ցուցակին պակասները: Նոյնպէս Դաւիթ միայն ինքն

է որ իր այս գրուածքին վկայութեամբ բոլոր հին թէ նոր մեկնիչներուն մէջ, կը վաւերացնէ Մենակեցի անանուն մատենագրին այն վկայութիւնը՝ որ իր տեսակին մէջ ց'այսօր միակն էր, և որով կը հաւաստէր թէ իր օրով կար Արիստոտէլի խառն հաւաքածոյ անունով գիրք մը, 72 հատուածներու բաժնուած: Նոյնպէս՝ բոլոր հին թէ նոր իմաստասիրաց մէջ Հայ փիլիսոփան է որ մեզ կը սորվեցնէ թէ Սահմանադրութեանց համաբաւար Հաւաքածոյն նախապէս այրենական կարգաւ յօրինուած էր, թէ Երդ դարու Աշխարհավարութիւնն այսօրուան պէս գիրք գիրք բաժնուած էր, և՛ վերջապէս թէ Աղէքսանդրիոյ Ատտիկեան մեկնիչներն եղան, որք որոշեցին մատենադարանաց մէջ պահուած Վերլուծական անունով գրքերէն ո՞րն էր ճշմարիտը: Ուշագիւր ընթերցողը դեռ կրնայ գտնել Հայ իմաստասէրին Նախաբանականաց մէջ ընդհ. փիլիսոփայութեան պատմութեան համար շատ մը թանկագին ու հազուադիւտ ծանօթութիւններ: Դաւիթ Անյաղթին գրած բուն մեկնութեան՝ գերադրապէս նշանաւոր ոճին շքեղութեան հետ կը միացնէ յստակ, ճշգրիտ ճշդութիւն մը, և կը ճառէ կարի խղճամիտ ու մանրակրկիտ կերպով հակաճառութեանց կամ վիճաբանութեանց առարկայ բոլոր կէտերուն ու խնդիրներուն վրայ, և Հայ իմաստասէրին սոյն անզուգական գործը Ամմոնիոսի և Սէմբրիկիոսի երկասիրութեանց յոյժ օգտակար ու կարեւոր լրացուցիչն է:

Դաւիթ Անյաղթի գործերն իրենց յատուկ ու ընդհանուր արժէքէն զատ, ունին ուրիշ բոլորովին յարօքերական ու մասնաւոր արժանիք մ'ալ, և որ երբեք արհամարհելի չէ: Հայ փիլիսոփային գրուածքներն օղակներն են այն իմացական երկայն շղթային՝ որ հիները նորերուն կը միացնէ: Դաւիթ Հայոց աշխարհին մէջ Հելլադայի իմաստասիրական շարժման ներկայացուցիչն է, որ իր կողմանէ նպաստած, զարկ ու մղում տուած է նաև այն փիլիսոփայական կարեւոր շարժման, զոր քիչ յետոյ Արաբք զարգացուցին: Անուանին Պարթըլէմի խորին յուզմամբ և ճշմարիտ սքանչացմամբ կը յարէ, «Երդ դարուն վերջերը, փիլիսոփա-

յական ուսմանց վիճակը Հայ աշխարհին մէջ այսքան վաւերական յիշատակարանի մը մէջ գտնելը՝ ըստ իս, փիլիսոփայութեան Պատմութեան նոր գաւառ մը գրաւել կամ աշխարհակալել է գրէթէ։ Հայ աշխարհը մինչեւ հիմայ այս տիտղոսով չէր երևեր, և սակայն արժանի է որ երևի։ Դաւիթ Անյաղթի երկիրն այս թուականին Հելլադայի փիլիսոփայական կեանքովը կ'ապրէր։ Կ'ուսանէր, կ'ուսումնասիրէր նոյն ինքն Աթէնքին պէս, Աղեքսանդրիոյ պէս, Կոնստանդնուպոլսոյ պէս, Արիստոտէլն ու Պլատոնը։ Ի մի բան, Հայոց աշխարհը փիլիսոփայութեան մէջ իր կարգն ու դիրքն ունէր, և եթէ չունեցաւ իրեն արժանի փայլուն ու տիրող դերը, պէտք է մեղադրել աւելի ժամանակին պարագաները և դժուարութիւնները քան թէ Հայ Ազգին հանճարը։ Դաւիթ Անյաղթի փառքը պիտի ըլլայ ներկայացնել իր Ազգը փիլիսոփայութեան մէջ, ինչպէս կը ներկայացնէր Աթէնքի վարժարանաց մէջ։

Պէտքիս Ակադեմիային կողմանէ հրատարակուած Արիստոտէլի ընդհանուր գործոց Դրդ Հատորին մէջ տպագրուած են Դաւիթ Անյաղթի Մեկնութիւններէն երկար հատուածներ և ի մէջ այլոց, Նախաբանականներն ամբողջ։

Յանուն ընդհանուր Հայ ազգին, Հայ գրական դասուն և ազգային Դպրութեանց պատուոյն, մեր խորին շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնն հրապարակաւ կը յայտնենք Փրանսացի մեծանուն իմաստասէրին, որ հաճած է Փիլիսոփայական գիտութեանց հանճարեղ քառաբանին մէջ, ի շարս ընդհանուր ազգաց իմաստասէրներուն դասել Հայ իմաստասէրն իրեն արժանի կարգով ու պատուով, և յորինել անոր ներբողը, որ ամէն հայու և ամէն ազգի սքանչացման և ծափին արժանի է։

Եւրոպացի իմաստասէրն ահա այսպէս եւ այսքան ներկայացուցած է Հայ փիլիսոփայական աշխարհի ընդհանուր իմաստասիրաց դասուն մէջ, իսկ թէ մեր հին դպրութեանց կամ մատենագրութեան պատմութիւնն ի՞նչ գրած է Դաւիթ Անյաղթի մասին, ուրիշ առթիւ բազմաթիւ ուսումնասիրութեամբ մը պիտի գրուի։

Ա. Լ.

ՓՈՌՆՁ ՊԵՐՄ • ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԵԱՆ

Ձօնեալ Առ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՄԱՂԿԱՆՑ ՔԷՆԸ

Կակուղ բարձին վրայ անկողնոյն
Մանկամարդ կոյսն հանգչի ի քուն,
Թուի թարթիչքը փակած ամուր,
Բոսորափայլ այտերն ի հուր։

Կնիւնէ հիւսուած աթոռոյն վրայ
Մի գեղարուեստ ծաղկաման կայ,
Ուր երվներփեան ծաղկունք շողան,
Դեռ նոր բրցուած, ու հոտնան։

Գոլ մը մղձկուտ ու թանձրամած
Ննջասենեակն է լեցուցած,
Բանդի ամառ է տօթագին,
Ու պատուհանք փակ են չորս դին։

Հուռ ու հանդարտ է ամէն բան.—
Թեթեւ շըշուռն մ'յանկարծ, սակայն,
Ծաղիկներուն մէջ ու ոստոց
Լըսուի հծծիւն մ'ու խըշըրտոց։

Ծաղկանց բուրոտ բաժակներէն
Գոլորչանիւթ ոգիք կ'ելնեն,
Իրենց հանդերձ ամպ է բարակ,
Ասպար կըրեն, ունին պըսակ։

Ծիրանագեղ ծոցէն վարդին
Նըրբահասակ կը կանդնի կին,
Գանգուրքն արձակ կը ծըփծըփան,
Մարգրիտք գերդ ցօղ փալփլին ցիւր ցան։

Դլխանոցէն ընձախտաին
Տերևներով կանաչ մըթին՝
Ասպետ յառնէ խըրոխտաքայլ,
Կորդակ՝ նըրան կ'արձըկեն փայլ։

Շուշանէն դուրս աղջիկ մ'օրրի,
Քօղն է նուրբ գերդ ոստայն սարդի,
Հուրջ հիւրիկէն գէնուզարդով
Իւր որսորդներ դուրս գան կարգով։

Մութ նայուածքով մէկ պատանի
Նարգսին ծոցէն կը սաւառնի,
Ու անկողնոյն մօտ գայ՝ ջերմին
Համբոյր տալու աղջկան բերնին։

Բայց պարանցիկ շուրջ անկողնոյն
Միւսներ վայրագ կ'ճօճին ծրփուն,
Ու, դարձդարձիկ, ալեծածան,
Այսպէս կ'երգեն նիրհող աղջկան։—

«Աղջիկ, աղջիկ, երկրին ծոցէն
Մեզ խըլեցիր անգըթօրէն,
Որ անօթին մէջ երփներանգ
Ծնգինք, խամրինք ու մահանանք։

Ո՛հ, ի՛նչ անոյշ էր օթեւան
Երկրին ծոցը մայրենական,
Յորում բեկբեկ շողքն արեւին
Ըզմեղ ջերմիկ համբուրէին։

«Ուր զով շունչով կ'օրրէին մեզ
Գարնան սիւքեր, և ուր, ինչպէս
Պարիկք, թողած մեր թերթից տուն,
Կը խաղայինք գիշերն ի բուն։

«Մեզ ցօղն, անձրեւ տային կաղդոյր,
Արդ կ'ոռագէ մեզ տղմուտ ջուր.
Կը թարչամինք, բայց դեռ չմեռած,
Մեր ոխն անշուշտ կ'ըլլանք առած։»

Երգը կը լռէ. ու կը ծըռին
Դէմքին վըրայ նիրհող կոյսին.
Խուլ լըռութեանն հետ առաջին
Մեղմ հծծիւնը դառնայ կրկին։

Ի՛նչ չըջնջիւն, ի՛նչ մրմունջք այն. —
Ի՛նչպէս վառին այտեր աղջկան.
Ինչպէս ոգիք կը փըշեն յայն.
Ի՛նչպէս բուրմունք չորս զին ծըփան։

Ահա՛ ողջոյն տայ այգ խցկին,
Համայն ոգիքն անհետ ցնդին.
Յուրտ, անկողնոյն բարձին վըրայ,
Չքնաղագոյն դին քնանայ։

Ինքն ալ ծաղիկ մը թարչամած,
Այտը մեղմով դեռ կարմըրած,
Կը հանգչի իւր թառամ քերց քով. —
Հսպանուած էր ծաղկանց բոյրով։

Թարգմ. Ռ. Յ. Պ.

Ֆ. Ֆոայիկոս

Քիչ Մը ԳիՏԱԿԱՆ

Մահուան հովիթը. — Շան փառանձաւը. —
Մահացու արձագանքներ. — Ճալալի «Կեկօ
Ուբաս»ը. — Թուցաւոր ծառ. — «Տեղի Կրկ».
Կեցողանքներու գերեզմանոց մը. — Ճամբորդի
մը պատմութիւնը։

Ամերիկայի մէջ նոր գիւտ մը եղաւ.
Մահուան հովիթ մը գտնուեցաւ։ Ըսենք
թէ ի՛նչ են մահուան հովիթները։

Նարոյի մօտ հոչակաւոր է Շան Գարան-
ձաւը, ուրիշ ներս մտնող ամէն փոքրահա-
սակ կենդանի իր մահը կը գտնէր առանց
բացառութեան։ Այսօր ալ, զբօսաշրջիկնե-
րու զուարճութեան համար, այդ քարան-
ձաւէն ներս կը մտնեն պզտիկ կենդանի-
ներ, ինչպէս շուն մը եւն, բայց չեն ձգեր
որ մեռնի։ Նւ աս' խնայութեան համար.
Ատենօք ճակատագրական բան մը կը նկատ-
ուէին այս քարանձաւին մէջէն բղխած թու-
նաւոր արտաշնչումները, բայց այսօր գի-
տենք թէ ածխային թթուն է որ, օդէն ա-
ւելի ծանր կազ մ'ըլլալով, կը հաւաքուի
այդ անձաւին ստորին մասին մէջ։ Ասոր հա-
մար է որ մարդը կամ մեծ կենդանիները,
ոտքի վրայ կեցած ատենին, աննպաստ
ազդեցութիւն մը չեն կրեր, բայց երբ
պառկին՝ անմիջապէս կը թունաւորուին.
Ճօրճ Պէնէդ կը պատմէ թէ Աւստրալիոյ մէջ
ալ կայ նմանօրինակ անձաւ մը, որոյ մթնո-
լորտն այնքան լի է թունաւոր կազերով որ
գլխագարութիւն և մինչև խկ թալուկ կը
պատճառէ։ Կրնանք յիշել նաև Լաչէր լճին
(Ռէնի եզերաց վրայ) շրջակայ անտառնե-
րուն մէջ գտնուած անձաւը։ Ածխային թը-
թուն հողին մէջէն մաղուելով կուգայ կը
հաւաքուի պզտիկ փոսի մը մէջ որ 60—90
սնդմ. խորութիւն ունի։ Մըջիւններ և ու-
րիշ միջատներ իրենց մահը կը գտնեն այդ
փոսին մէջ։ Նւ մինակ ալ չեն մեռնիր։ Ի-
րենց դիակներն իբրև խայծ կը ծառայեն
թռչուններու որ իրենք ալ կուգան իրենց
հարկը վճարել մահուան։

Երբեմն կը պատահի որ ածխային կամ
ծծմբային թթուն ընդարձակ տարածու-
թեան մը վրայ կը հաւաքուի, և փոխանակ

պղտիկ փոսի մը, անձաւի մը կամ հորի մը մէջ պարփակուելու, կը տարածուի և կը լեցնէ, օրինակի համար, ամբողջ հովիտ մը, հովիտ կայ հովիտ ալ կայ անշուշտ: Մահուան հովիտները բարեբախտաբար քիչ են: Եւ արդէն ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ: Ամէն հովիտ դառնիթափ մ'ունի որ դէպի ծով կ'երկարի: Հետեւաբար թունաւոր կազերն անոր բարձրութեան վրայ չեն կրնար հաւաքուիլ: Կը հոսին անդադար: Մնաց որ հովը մեշտ կ'աւլէ ու կը մաքրէ հովիտը: Մահուան հովիտներն հազուադէպ են ուրեմն: Ասոնցմէ մին է Թոյնի հովիտը, Կեփօ Ուբաս, որ կը գտնուի ի ձա՛վա, Բաբանտայանկի հրաբուխին կողերուն վրայ: Նեղ հովիտ մ'է ան ուր կը թափին ածխային թըթուի բազմաթիւ աղբիւրներ: Ռէնկարդ և ուրիշ ճամբորդ մը հոն տեսած են շուներու, կատուներու, վագրներու, ռնգեղջիւրներու, սիւրճներու, թռչուններու և օձերու դիակներ: Անոր մէջէն անցնիլը մահուան դէմ երթալ ըսել է: Բոլոր այն կենդանիները որ հոնկէ ներս կը մտնեն դիակներու տեսքէն հրապուրուած, իրենք ալ դիակներ կը դառնան խոյն: Այս տեսակ հովտի մը մէջ է որ առաջին անգամ դիտուեցաւ Ուբաս Անդիարը կամ Թունաւոր ծառը: Լընտըն Մակադէնի մէջ անգլ. վիրաբոյժ մը կը նկարագրէ զայն: Այդ նկարագրութիւնը կարդալով մարդուս վրայ դող մը կուգայ: Տեսայ, կ'ըսէ, անոնցմէ մին որ ահաւոր մենութեան մը մէջ ցցած էր իր տերեւները: Իր շուրջը կը վխտային թռչուններու, կենդանիներու և մարդերու կմախքներ: Բնաւ հետք մը չկար բուսական կեանքի...»: Ծիշան ըսելով, վիրաբոյժն անխառն է բոլոր այս չարագործութիւնները վերագրելով անդիարին: Անիկա նոյնչափ անմեղ է որչափ կարելի է ըլլալ: Բայց ըլլալը բանի մը չի ծառայեր, քանի որ կոսկածը կայ: Այսպէս կ'ուզէ մարդկային տրամաբանութիւնը... Ի ձա՛վա: Ծշմարտութիւնը սա՛ է որ անդիարին հիւթը միայն թունաւոր է: Մարդ կրնայ անվնաս կերպով շնչել անոր ճիւղերուն մէջէն անցած օդը կամ անոր հովանիին տակ մուշ մուշ քնանալ առանց ո՛ւնէ անպատեհութեան: Բայց երբ կեղեքը փորուի, անկէ ելած հիւթը կրնայ մարդուս

ձեռքերը կամ դէմքը այրել: Դառնանք այն հովտին որ, ինչպէս ըսինք, գտնուեցաւ Նիւ Եորքի մէջ: Այս հովիտը կը կոչուի Տեդհ Կըլլ և կը գտնուի հռչակաւոր Եէլօ սիօն Բարքի մէջ, — այն ընդարձակ հողին վրայ, զոր ամերիկեան կառավարութիւնը դապու հռչակեց, այսինքն արգիլեց որսորդներուն հոն մտնել, որպէս զի վայրի կենդանիները, որոց շատ տեսակներն անհետանալու վրայ են, կարենան հոն ապաստանիլ և խաղաղութեան մէջ ապրելով՝ աճիլ ու զարգանալ: Այս տեղ որսացողը խիստ պատիժներու կ'ենթարկուի: Տեդհ Կըլլը կը գտնուի այս հողին արեւելեան մասին մէջ, լեռնոտ ու ցից տեղ մը: Անոր գոյութիւնն երեւան հանցին Ուեբիդիսները (տեսակ մը եղջերու) որոց հետքերուն ետեւէն դացին որսորդները: Այս հետքը կ'առաջնորդէր ցանցառուս վայր մը որուն կեդրոնը փոս մը կար աղով լեցուն: Ահա այս աղին համար էր որ հոն կուգային եղջերուները: Հոն օդը խիստ գէշ հոտ մ'ունէր: Դիւ ժ'անդին կար ուրիշ փոս մը, 15 մէդր խորութեամբ: Մէջը քիչ մը ջուր, պաղ, թթու: Առաջին այցելուները մօտեցան այս փոսին, բայց վրանին տկարութիւն մը գալով առին քալեցին: Քանի մը մէդր հեռուն, իրենց առջեւ տեսան խոշոր մոխրագոյն արջ մը: Եւ որովհետեւ որսի համար չէին ելած, աճապարանքով մագլցեցան մօտակայ զառիվերը: Հոնկէ նորէն դիտեցին գաղանձ տեսնելու համար թէ ի՞նչ կ'ընէ կամ պիտի ընէ: Արջը տեղէն չէր շարժած: Կարծեցին որ քնացեր է ու սրռացին, զայն արթնցնելու համար: Կենդանին չարթնցաւ: Մեռած էր, Ուստի այցելուները վար իջան, մօտէն քննելու համար զայն: Կրիչի մ'էր ան, երկար ու զօրաւոր ճիրաններով և սայրասուր աղւաններով: Դիակն ասդին անդին դարձուցին: Վէրքի հետք մը կամ բռնութեան նշան մը չկար բնաւ: Հանդարտ մահով մը մեռած էր ան, ու ճանձերը, որ դիակներու բարեկամ են, բնաւ չէին հաւաքուած անոր շուրջը: Արջն ինտո՞ր մեռած էր արդեօք: Արեւան քանի մը կաթիլներ, որ անոր քիթէն կ'վազէին, աւելի հետաքրքրութիւն չարժեցին: Մինչ այցելուներն աջ ու ձախ կը դիտէին, լուծում մը գտնելու համար, յանկարծ ուրիշ արջ մ'ալ տեսան

որուն դիակը տարբադադրուելու վրայ էր : խուզարկուներն ա՛ւելի զարմացան , բայց ժամանակ չունեցան իրենց զարմանքը շարունակելու : Դրուխինն կ'սկսէր դառնալ ու քիչ մնաց որ վար պիտի իյնային : Յանկարծ վտանգին մեծութիւնն հասկցան եւ , առանց կայնիլ փիլիսոփայելու արջերու մահուան վրայ , ուժերին ժողվեցին եւ վազեցին եւլան մօտակայ դառիվերը , ուր մաքուր օդը կենդանութիւն տուաւ իրենց : Անգամ մը ազատելէ ետք ածխային թթուի ազդեցութենէն — վասն զի ան էր յանցաւորը — խուզարկուներն սկսան կարգ մը զննութիւններ կատարել : Տեսան որ բոցավառ թուղթ մը խսկոյն մարեցաւ , — ապացոյց օգին անշնչելի ըլլալուն : Տեսան նաեւ որ միայն արջերը չէին ածխային թթուի զոհերը : Թռչուններու , աղուէսներու , ճագարներու կմախքներ կը վխտային հոն :

Ու սարսափով հեռացան մահուան հովիտէն :

Ժիրայր Շիրակացի

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՂԲԵՐ

Փքիք (Poudrette, մարդու աղբ, չորցած եւ փոշի դարձած) պարարտութիւն մ'է , զոր ձեռք կը բերեն մարդկային կղկղանքը չորցնելով :

Ֆլուսեցակաճ աղբ անուամբ ծանօթ է այն հաստատուն եւ հեղուկ կղկղանքներու խառնուրդն , որ կոյանոցներէ կամ գայռանոցներէ ձեռք կը բերուի , իր անուին առած է Ֆլուանտիոյ մէջ առհասարակ գործածուելէն : Չենք գիտեր թէ Անատուրի մէջ ի՞նչ անուն կուտան այս աղբին , քանի որ հոն ալ մարդկային կղկղանքին մէկ կաթիլն անգամ չեն կորսնցներ , երբ կոյանոց—հորը լինայ , կը պարպեն եւ անասնական աղբի հետ խառնելով կը կուտակեն արտի մը ծայրը , մինչեւ որ խմորուի , այրի եւ օդին ազդեցութեան տակ փռուոյ վերածուի :

Փոսիորային թթուի եւ բորակածինի կողմէ հարուստ ըլլալով փթիրը եւ ֆլան-

տրական աղբը կը գործածուին արմտիքներու եւ ձիթաւոր հունտերու մշակութեան համար : Որովհետեւ անոնք արագապէս կը տարրալուծուին , առաջինը ցանքի պահուն հողին հետ կը խառնեն եւ երկրորդը՝ դարնան կը գործածուի իբրեւ ծածկոյթ , այսինքն առանց զայն հողին հետ արօրադրելով խառնելու : Ֆլանտրական աղբին թերութիւնն է իր դարչելի հոտը : Սովորաբար կ'ապանեխեն զայն , կանաչ արջասպ (զահի գըրպըզ) կամ երկաթի ծծմբատ (sulfate de fer) խառնելով անոր հետ , իւրաքանչիւր խորանարդ մէդրին 4 քիւօ համեմատութեամբ :

Թռչնային ծիրք (Guano) , որ ծովային թռչուններու կղկղանքէն կազմուած է ինչ ինչ ամայի կղզիներու մէջ , ծանօթ պարարտութեանց մէջ ամէնէն հարուստ ու զօրաւոր աղբերէն մին է : 400ին մինչեւ 6—7 ազօդ եւ 100ին մինչեւ 10—15 աւիս ֆօսֆօրի կը պարունակէ : Դժբախտաբար , թռչնային ծիրքին մթերքն ոյնքան չարաչար չահագործուած է Եւրոպիոյ մէջ , որ այդ աղբ հազուագիւտ եւ հետեւապէս մեծածախ դարձած է : Աղանիներու եւ ուրիշ հաւեղէններու աղբն ալ կրնայ չահագործուիլ , բայց ինչպէս դիւրըմբռնելի է , անոնց քանակութիւնը միշտ սահմանափակ պիտի ըլլայ :

Չորցած արիւնն եւ սպանդանոցներու ամէն տեսակ բեկորները , բուրդի ու կաշիի կտորուանքները , նոյնպէս հզօր պարարտութիւններ են , բայց անոնց ազդեցութիւնն անմիջական չէ , այլ ժամանակի կարօտ : Այս նիւթերը հողին մէջ պարտին կրել խորունկ այլափոխութիւն մը որ բորակաւորում (nitrication) անուամբ ծանօթ է , եւ որմէ վերջ միայն իրենց ազօդ կուտան բոյսերուն : Ասոնք կը գործածուին մանաւանդ աշնանային աղբաւորմանց ատեն երբ արտերը կը հերկուին , որպէս զի հողը ձմրան ձիւնին ու անձրեւին տակ փխրի :

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՂԲԵՐ

Օդը , որ կը շրջապատէ զմեզ , բորակածինի (ազօդ) անսպառ աղբիւր մ'է : Եթէ կարելի ըլլար այս թանկագին նիւթը քա-

դել հանել օդէն, երկրագործութեան համար մեծ առաւելութիւն մը պիտի ըլլար. բայց գիտութիւնը դեռ չէ յաջողած այդ բանն ընելու, գէթ գործնական եւ ուղղակի եղանակաւ, բայց մասամբ միայն յաջողած է անուղղակի կերպով:

Արդէն երկար ատենէ ի վեր մարդիկ գիտէին թէ ինչ ինչ բոյսեր, հողին մէջ թաղուելով, ճոխ պարարտութիւն մը կը հայթայթեն, բայց այս միջոցը չափաւոր կերպով միայն կը գործածուէր, որոյ ճշմարիտ կարեւորութիւնը կ'անդիտանային: Գիծիադէտներն ի վեր հանեցին անոր արժէքը: Ասոնք հաստատեցին թէ ընդաւորներու ընտանիքէն եղող բոյսերն, ինչպէս վիգ (vesce պուշագ), ասպատը (luzerne, գապա եօննա), առուոյտը (եօննա) օդին պարունակած բորակածինը ծծելու եւ անցնելի ընելու կարողութիւնն ունին, եւ հետեւապէս հողին պարունակած բորակածնաւոր նիւթերը (matières azotées) անվթար կը թողուն: Եթէ ուղենք մշակել բոյս մը որ շատ բորակածին կը պահանջէ, օրինակի համար ցորեն, նախ եւ առաջ կրնանք առուոյտ մշակել մեր արտին մէջ եւ ասպառուոյտն ալ իբրեւ յաւելուածական աղբ գործածել հետեւեալ կերպով:

Հողը լաւ մը աղբելէ ետք, առուոյտը կը սերմանենք: Երբ առուոյտը ծաղկի, ինչ որ ընդհանրապէս տեղի կ'ունենայ Մայիսի վերջը, արօրով կը թաղենք դայն: Հողն անմիջապէս պիտի հարստանա՞ր բորակածինով: Ո՛չ. ժամանակ պէտք է որ առուոյտը փափ եւ տարրալուծուի հողին մէջ: Կրնանք տարրալուծումը փութացնել, եթէ թաղման ատեն կիր ցանենք առուոյտին վրայ:— Բայց այս կերպով տարի մը չենք կորսնցներ, քանի որ Մայիսի մէջ ենք, պիտի ըսէք, եւ քանի որ ցանքին ժամանակն անցած է:— Ո՛չ, եթէ դործը բարեւոք բռնէք: Եթէ այս կերպով աղբուած արտին մէջ դարձեալ ցանենք վաղահաս ընդաւոր մը, օրինակի համար լուբիա, ոլոռ կամ վիգ (պուշագ), ծախքերն այս կերպով մասամբ ծածկուած պիտի ըլլան: Ասկէ դատ, որովհետեւ այս ընդաւորը արտի սպառն մանաւանդ առաջին աղբին բօքսն ու ասիս ֆօսֆօրի՞ն, եւ գրեթէ անվթար պիտի թողուն թէ՛

առաջին աղբէն եւ թէ՛ թաղուած առուոյտէն յառաջ եկած ազօդը, հողը ազօդով լիովին ճոխացած պիտի ըլլայ երբ յառաջիկայ տարի ցորեն ցանենք. եւ եթէ օդին անբարեխառնութիւնք արգելք չըլլան, հունձքն իր առատութեամբ պիտի փոխարինէ մէկ տարուան երեւութական զոհողութիւնը, Բուսական պարարտութեանց մէջ պէտք է յիշել ծովային բոյսերը, որք ծովասէղ (fucus) կամ վարեխ (varech) անուամբ ծանօթ են: Ասոնք երբ չորնան, կուտան պարարտութիւն մը, գրեթէ կրկնապատիկ հարուստ քան ագարակին աղբը, եւ եթէ մէկ էքդառի համար 10,000 քիլօ ագարակի աղբ գործածել հարկ ըլլայ, 5 հազար քիլօ վարեխով կրնանք բաւականանալ: Բայց աղբին այս սեսսկէն ալ ծովեղերեայ քաղաքներու մէջ միայն կրնանք օգուտ քաղել: Իբրեւ աղբ կը գործածուին նաեւ ընդհանրապէս կոպտոնները (tourteaux), Ասոնք մնացորդներն են իւղոտ հունտերու որոց մէթը ճնշմամբ հանուած է: Գաւառներու մէջ, վիգին կոպտոնը մատակներու կը կերցնեն ձմեռ ատեն, փոխանակ գործածելու արտերու պարարտացման: Կոպտոն ուտող մատակին (էդ գոմէջ) մորթը կը կարմրի եւ կաթն աւելի թանձր ու սերտ կ'ըլլայ: Կոպտոնը որ 100ին 5—7 ազօդ (բորակածին) կը պարունակէ, չորնալով խոշոր փոշի մը կը դառնայ, եւ դարնան, վարուցանէն առաջ, հողին հետ կը խառնուի, արտապար գլուխ 1000 քիլօիրա՞մ համեմատութեամբ:

Ագարակի աղբէն ետք, անոր յատկութեան ամէնէն աւելի մօտեցող բնական պարարտութիւնն է մարդկային կղկղանքը, կամ կոյանոցներու սղարպուքը (vidanges): Արգարեւ մարդս կրնայ նկատուիլ իրբեւ արտադրիչ մը աղբի, եւ որովհետեւ մտով ու ընդեղէնով կը սնանի, իր ասպովիծութիւնք բորակածինի եւ փոսփօրային թթուի կողմէ աւելի հարուստ են քան խոտակերներուն կղկղանքը: Երկրագործութեան մէջ իրագործելի մեծագոյն յառաջդիմութիւններէն մին պիտի ըլլայ ուրեմն կոյանոցներու սղարունակած նիւթերուն ամբողջական չահագործումը: Թողուլ որ մարդկային կղկղանքն ունայէտս կորսուի՝ ծովը կամ գետը

հոսելով, մինչ ա՛յնքան հոգ կը տարուի ծովերէն անդին իսկ թռչուններու ծիրտերը փնտռելու, ակներեւ անխորհրդութիւն մ'է որ չի կրնար ընդերկար անտես առնուիլ: Բաղաքներու փողոցներուն աղտեղութիւնք կամ ցեխերն ալ մշակական արժէք ունին հաւասար աղբի արժէքին: Կոյուղիներու (կէրիզ) ջուրերն ալ ընտիր պարարտութիւն մ'են, եթէ կարենանք զանոնք գործածել մշակութեան հողերու ոռոգման:

Կանաչեղէն պարարտութիւնք եւս աղբին պէս կրնան ազդել: Արագարար կը տարրալուծուին, կանաչեղէն աղբերը կամ պարարտութիւնք կրնան երկու խումբի բաժնուիլ: 1. Անոնք որ դարնան կը թաղուին աշնան սերմանուելիք բոյսերուն իրեւ աղբ ծառայելու համար, ինչպէս թրմուս (փոքր բակլայ), վիգ, կանճակ, ձմրան շողգամ, կարմիր վարսակ, հաճար, ճերմակ եգիպտոլու (աճը պագլա) եւլն: 2. Անոնք որ ամրան կը թաղուին իրեւ աղբ ծառայելու դարնցան արմտիքներուն (ինչպէս, եգիպտոլու, lupin, տաճիկ ցորեն, sarrasin, շողգամ navette):

Բարիզի բնական պատմութեան Մուսէոնին ուսուցիչ Տոքթ. Տրէրէն 1892ին Գիտութեանց Ակադեմիոյ առջեւ ցոյց տուաւ միջոց մը շահագործելու այն բորակածնաւոր նիւթերը որք հունձքէն ետք արտերուն վերայ կը մնան:

Աշնանային անձրեւները կը լուծեն այս նիւթերը, եւ երկրագործներուն կրել կուտան աղբի կոյուստներ, որոց արժէքը էքզար գլուխ 70 ֆր.էն աւելի է: Հունձքէն անմիջապէս ետք, եթէ արագապէս աճող հունտեր սերմանուին, օրինակի համար վիգ (պուրչագ), մատղաշ առնկերը ծծելով անցնելի կը դարձնեն արգասաւորիչ տարրները, մանաւանդ աղօղը, եւ կը ճոխանան մինչեւ իսկ ի վնաս օդին աղօղին: Երբ յետոյ, երկրագործն իր արտն հերկելով հողին մէջ թաղէ այս մատղաշ բոյսերը, անոնք յոյժ ազդու խոտային կամ կանաչեղէն պարարտութիւն մը (engrais vert) կը կազմեն:

ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲԵՐ

Հանքային աղբերը կրնանք չորս խումբերու բաժնել,

1. Բորակածնաւոր աղբեր (Engrais azotés):

2. Փոսփորաւոր աղբեր (Engrais phosphatés):

3. Բոդասական աղբեր (Engrais potassiques):

4. Կրային աղբեր (Engrais calcaires).
ըստ այն համեմատութեան որով կը պարունակեն մեծ մասամբ այս չորս արգասաւորիչ գոյացութիւններէն մին կամ միւսը, ինչպէս ազոդ, ապիս ֆոսֆորի, բոդաս կամ քո (կիր):

[Շարունակելի]

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ

Լէտիամիթ առնուեցա՛ւ, ո՛չ, չառնուեցաւ. և իրաւ ալ ամէնէն վերջին լուրերը կ'ըսեն թէ Լէտիամիթ չառնուեցաւ, այլ կը դիմանայ միշտ: Այդ քաղաքին դիւցազնական պահնորդք աշխարհի առջեւ այսօր ցոյց կուտան աննկուն արիւթեան մը, դերաւանց տոկունութեան մը օրինակը, եռամսեայ պաշարումը չէ վհատեցուցած զանոնք, եռամսեայ խիստ պաշարման դժուարութիւնք ամէն ժամանակէ աւելի հսկայ դիմադրութեան մը հերոսները կ'ընեն զիրենք: Զօր. Ժուպէն իր դերմանացի և Ֆրանսացի սպաներէն չըջապատուած, անոնց խորհրդով, մանաւանդ թէ ռադմարիտական ծառնոթութիւններով զօրացած, այսօր չի կրնար տակաւին անձնատուր ըլլալու ստիպել զօր: Հուսյղն ու իր զինուորները, Թրանսլաւեան պատերազմին պատմութեան մէջ Լէտիամիթի պաշարումն ամէնէն չահեկան եւ հետաքրքրական էջը պիտի կազմէ: Բայց վերջապէս ի՞նչ պիտի ըլլայ այդ քաղաքին ասպազան, եւ իր պահնորդներուն ալ ասպազան: Այս կէտը դեռ չենք կրնար զիտնալ կամ գուշակել, քանի որ Զօրավար Լորտ Բոպէրցի և Զօր. Լորտ Քիչնէրի պատերազմական յատակաձեւը չենք գիտեր: Երկուքն ալ Բարեյուսոյ մէջ դեռ կ'որոճան

այդ յատակաձեւը . թերեւս կ'սպասեն Երես-
փոխ . Ժողովոյ և Լորտերու Խորհրդարանին
վիճաբանութեանց ելքին : Հանդիսաւոր վի-
ճաբանութիւնք կ'ըլլան այս միջոցիս Անդ-
լիոյ մեծ մայրաքաղաքին մէջ : Պահպանո-
ղական կուսակցութիւնն իր երկու հզօր
ներկայացուցիչներուն—լորտ Սալզպըրիի եւ
Մր. Պալֆուրի—բերանովը կը պաշտպանէ
նախարարութիւնը՝ որ Թրանսվալի հետ
պատերազմի վիճակն առաջ բերաւ : Ազա-
տականք և Սրմատականք հին խնդիրներ
կը քրքրեն , նախարարութեան վրայ կը
յարձակին ոչ միայն ճակատէն , այլ նաեւ
կողերէն . կ'ամբաստանեն զայն թէ ձէյմսընի
արչաւանքին մեղսակից եղած է Ժամանա-
կին , եւ Պօէրներուն մէջ Անգլիացւոց դէմ
ձնուցած է անհայտ ատելութիւն մը՝ որ
այսօր մերկապարանոց կ'երևի : Լորտ Սալզ-
պըրի կը յանդիմանէ իր հակառակորդները ,
գոչելով թէ առժամանակեայ ձախողութե-
անքը բրիտանական պատերազմներուն յա-
ռաջարանն եղած են միշտ . նոյնը կը կրկնէ
Պալֆուր Երեսփ . Ժողովոյ մէջ , թափով եւ
ուժգնութեամբ . Ձէմպրլէն կը խոստովանի
թէ այո՛ , մասնակցութիւն ունեցած է կեր-
պով մը ձէյմսընի արչաւանքի յատակաձե-
ւին պատրաստութեան մէջ , բայց ասկէց
ի՞նչ կ'ելնէ . ճշմարիտ չէ՞ որ այսօր սա՛
կամ նա՛ ձեւով Անգլիա պատերազմ ունի
Թրանսվալի եւ Օրանժի հետ : Թողո՞ւնք որ,
կ'ըսեն նախարարք , այդ երկու փոքր Հան-
րապետութիւնք յաղթանակ տանին անդլ .
կայսրութեան վրայ . թողո՞ւնք որ աշխար-
հի առջեւ Թրանսվալ և Օրանժ յաղթած
ըլլան մեզ , և Նադալի ու Բարեյուսոյ դա-
ղութներն իյնան հոլանտական տարրին դե-
րակշիռ ազդեցութեան ներքեւ : Արդէն
ձէյմսընէն առաջ Թրանսվալ սկսած էր խը-
լրտումներ ընել Անգլիոյ տիրապետութեան
դէմ նոյն իսկ անդլ . գաղութներուն մէջ ,
«Մի՛ ստիպէք զիս ըսել , կ'ըսէ Ձէմպրլէն ,
թէ նոյն իսկ ձէյմսըն կրնայ արդարանալ
իր արչաւանքին վրայ՝ որ , աւա՛ղ , չյաջո-
ղեցաւ սակայն » :

Լորտ Սալզպըրի յորդոր կը կարգայ
անդլ . ազգին ներկայացուցիչներուն որ առ-
այժմ մոռնան պատերազմին նախընթացը ,
եւ տեսնեն միայն թէ ի՞նչ կերպով կարելի

է յաջողակ վախճանի մը յանգեցնել զայն ,
եւ անգլիական զինուոց պարտութիւնը փո-
խարինել փայլուն յաջողութիւններով , որք
առաջնորդեն վերջապէս Մեծն Բրիտանիոյ
գերակշռութեան ամբողջ հարաւային Աֆ-
րիկէի մէջ : «Լիմցնե՛նք պատերազմը , յետոյ
հաշիւ կուտանք ձեզ , կ'ըսէ Լորտ Սալզպը-
րի » : Եւ արդէն այս է խնդրոյն տրամա-
բանութիւնը : Հակառակ առաւել կամ նուազ
բուռն վիճաբանութեանց , բրիտանական
հայրենասիրութիւնը պիտի ստիպուի քուէ-
արկել ի՞նչ վարի և ի՞նչ զինուորական զօ-
րութիւն որ հարկ ըլլայ հարաւ—աֆրիկեան
պատերազմին համար : Խորհրդարանին այս
կամեցողութեան միայն կ'սպասեն լորտ Բո-
պէրց եւ լորտ Քիչնէր իրենց կարգին եւ
իրենց փայլուն սպաներով բախտը փորձե-
լու , Պուլլըրներէ , Հուայդներէ , Միթուէն-
ներէ , Կէդէքներէ , Ուօչօքներէ ետք :
Արդէն կը խօսուի 100,000 նոր ահեղ բա-
նակի մը վրայ որ հարաւային Աֆրիկէի ջու-
րերը պիտի զրկուին : Դիրքերը զօրաւոր
են . սարերով ու ձորերով չըջապատուած է
Բլանամիրն գետինը , իրեւ թէ վանդակի մը
մէջ : Սարէ սար ոստում պիտի ընեն Անդ-
լիացի զինուորք որք , պէտք է խոստովա-
նիլ , քաջութեան նուազ փայլուն ապացոյց-
ներ չընծայեցին ցարդ : Շարունակ ոստումի
պէտք կայ . եթէ Սրիօն Քօրի սարը ձեռք
ձգէին , պիտի ստիպուէին ուրիշ Սրիօն Քօրի
մը վրայ ցատկել , ապա ուրիշի մը վրայ եւ
չարունակաբար մինչեւ որ այսպէս իրենց
երկու ոտքերուն վրայ իյնային Լէտիսմիթի
ստորոտը : Այս է ահա Անգլիացւոց վիճակը ,
և պէտք չէ զարմանալ բնաւ երբ զինուո-
րական անակնկալներու լուրեր կ'առնենք
չարունակ :

Ձօր . Ժուպէռ նորէն սպաննուեցաւ . . .
նոր հեռագրի մը մէջ : Բայց պօէր զօրավա-
րին բարեբախտութենէն՝ հեռագրին ուսմե-
ները զօրաւոր չեն Քրէօդդի և Քրուբի
ուսմաներուն չափ , եթէ ոչ՝ մինչեւ հիմա
բղիկ բղիկ պիտի ըլլար Թրանսվալի վերին
հրամատարին մարմինը : Հեռագրի խաղե-
րուն վերջը չի դար . այսօր Լէտիսմիթ անձ-
նատուր կ'ըլլայ . . . Ֆուռնիէի Գործակալու-
թեան ձեռքը , վաղը Աժմանս տը Գոնսպան-
դինորը ամենայն բարեմտութեամբ կը ծանու-

ցանկ թէ միջնորդած է... և վերջին պահուն ետ ձգած է անձնատրուութեան պայմանադիրը: Այսօր զօր. Ժուպէն կը մեռնի... զիչերուան հեռագրի մը մէջ, իսկ առաւօտուն Աժանս Նասիւնալ կը վերակենդանացնէ զայն իր ածիւններէն իբրեւ նոր իմն Փիւնիկ: Բայց մի՛ զարմանաք. հեռագիրներն ալ պատերազմին պէս իրենց անակնկալներն ունին:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Դատական նախարարութիւնը պաշտօնապէս ծանոյց Աղգ. Պատրիարքարանի թէ Կրօնական Տեսչի օգնական Պէհա պէյ, որ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան վրայ հսկելու պաշտօն ունի, ի մօտոյ Սիւ պիտի ուղևորի, և թէ հետեւաբար Աղգ. Պատրիարքարանի պաշտօնական ներկայացուցիչն ալ պէտք է որ ընկերանայ Ն. Վսեմութեան: Ս. Պատրիարք Հայրն ի նիստ հրաւիրած է խառն Ժողովը, սոյն պաշտօնական զիրն ինկատ առնելու և զարմանը տնօրինելու համար:

ԱՄՈՒՍՆԱԼՈՅԾՆ՝ Ս.ՊԵՐՋԱՆԻԿ

(Գիւղալիկայ)

Յաջորդ թուով պիտի սկսինք մաս առ մաս հրատարակել վերոգրեալ մակագրով վէպ մը, գիւղական ու ցեղային կեանքէ քաղուած, և յատկապէս Հանրագիտակի համար գրուած՝ ծանօթ գրագէտի մը կողմէ: Այս վէպ իր ընդգրկած նիւթով, որ օրուան տյժմէութիւնն է, և իր պարունակած նկարագրական գողար պատկերներով ընթերցողին հետաքրքրութիւնը շարունակ վառ պահելու կրկնակ առաւելութիւնն ունի, թո՛ղ իր բարոյացուցիչ գերազանց հանգամանքը, որ այլապէս չահեկան է: Սոյն վէպ կը պարունակէ ցեղային ու ընտանեկան շատ մը սրբազան աւանդավէպեր, որոց հետաքրքրաշարժ ու շահեկան նկարագրերը, իրենց գունա-

գեղ գիծերով, պիտի կարդան ընթերցողը անտարակոյս արժանաւոր հետաքրքրութեամբ:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կրնայ հայթայթել բոլոր վարժարաններու պէտք ունեցած դասագիրքերը, եղած յանձնարարութեանց ճիշդ համաձայն: Ամէնէն մեծ զեղչը կուտայ, առանց ո եւ է շահու ակնկալութեան: Փորձեցէք եւ պիտի տեսնէք: — Միւս կանխիկ:

Դործ. Բերականութիւն Յրանս. լեզուի
Դիմ 7 Ղր.

Ո՛վ որ կը փախաքի հմտանալ ֆրանս. քերականութեան բոլոր նրբութիւններուն, կրնայ վստահաբար առնել Պօղոսեան Յրանս. Բերականութիւնը, որ պատրաստուած է Լառուսի, Կէրասի, Լարիվիէ Պաշէի քերականութեանց հետեւողութեամբ, և բաղմապիսի հրահանգներով ճոխացած:

Կը ծախուի բոլոր գրավաճառներու քով: Կեդրոնատեղին է Հանրագիտակի Տնօրէնութեան քով:

Ինքնապատասխանութիւն

Ընդդիմ

Գիւղական, Գաղղական եւ Միզանքի բոլոր հիւանդութեանց.

Գիմ 6 Ղր.

Կը ծախուի բոլոր գրավաճառներու քով:

Մ Է Ճ Է Լ Լ Է

ՕՍՄ. ԲԱՂ. ՕՐԻՆԱԳԻՐԻ

Սոյն օրինագրքին հայերէն թարգմանութիւնն և թուրքերէն արտասանութիւնը գէմ առ գէմ հրատարակուած են, հինգ հատորներու մէջ ամփոփուած: Իւրաքանչիւր հատորի գինն է 10 զրուշ. 5 հատորն ի միասին առնել ուղողին համար 40 զրուշ: Կը ծախուի բոլոր գրավաճառներուն քով: Գաւառներէն և թէ 45 զրչի փոսթայի բուլ զըրկուի Հանրագիտակի Տնօրէնութեան, փոսթայով կը զրկուի յանձնարարեալ ծրարով:

Արտոնահր. — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրուշ

800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ներու եւ ընթանեկան ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զուկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղչ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի Տնօրէնութեան:

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱԺԵԱՆ

Գին 4 Ղրուշ

Լոյս տեսաւ Ն. Պերպերեան մաթուր զաւգրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փետրեմբեր 1900ի զաւգրութեամբ, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պատրուակած պատմական, զիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ուշադրութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրապէ մեծաբանակ 30 առ 100 զեղչով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուստ Ղազարօժ եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասքգիէ խան թիւ 1 եւ 2: Ներուպիոյ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, քաւմ դերու անհուն պէտքերով լին միշտ պատրաստ ունի մեծաբանակ, ինչպէս նաեւ տիեզերական համբաւ վայելող Ներուպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դերերը ու ամէն տեսակ հանձնարարութիւնները: Դաւառներէ եղած յանձնարարութիւնք նշուի ու փութով կը կատարուին, անմիջեղի կերպիւ ածանց գներով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ԿԱՌՆԻՈՐ ԱԶԴ.— Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ԶԲԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եւամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ՄԵՐ ՀԱՍՏԵՂՆ

«Հանրագիտակի» վերաբերեալ ամէն գրութիւն պէտք է ուղղել Նաան Պերպերեան զաւրանը, Էսփի զապրիյէ հասցէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն եւ խմբագրութիւն «Հանրագիտակի»